

ՀԱՄԱՍՏԵՂԻ «ՍՊԻՏԱԿ ՁԻԱՎՈՐԸ» ՎԵՊԸ

Մ.Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Համաստեղը (Համբարձում Կելենյան, 1895 - 1966) 1928 - 1930թթ. ճանապարհորդեց Եվրոպայի և Մերձավոր արևելքի երկրներում, հարուստ տպավորություններով վերադարձավ Ամերիկա: Պահպանված նամակները, մամուլում լույս տեսած նյութերը՝ վկայում են, որ Համաստեղը հանդիպել է Հայ ճանաչված գրողների, ՀՀԴ շատ նշանավոր գործիչների (նրանցից մի քանիսին ավելի վաղ էր ճանաչում), մոտիկից տեսել ու հասկացել սփյուռքահայության տարբեր հատվածների կյանքի բարդությունները: Նա եղել է Տեր Զորում: Տեր Սուրեն Ա. քհ. Բաբախանյանը հիշում է, որ Համաստեղը ավագների մեջ թաղում էր ոսկորները, ու թվում էր՝ «կը հասկնային անոնք, ոսկորներն ու Համաստեղը իրարու լեզուն»: Իսկ երբ ավագների միջից Համաստեղը մարդկային գանգ հանեց, մտածեց հետը տանել: «Բայց գանկը Ամերիկա չի հասնի, Ամերիկա մտնելու արտոնութիւն չի կրնար ունենալ, Հայու գանկ մը ըլլալուն պատճառով:

Գանկը կը մնա Փարիզ», - պատմում է Ս.Ա. քհ. Բաբախանյանը:

Կ.Ասատունին հիշում է Համաստեղի՝ դեպի Տեր Զոր կատարած ուխտագնացության մասին. «Համաստեղ վերադարձած էր այս չրջապտույտեն: Ողբերգությունը լռեցայն կը կրէր իր հոգիին խորը, ու ոգևորությամբ կը խոսեր գաղութներուն մեջ վերապրող Հայ զանգվածներուն մասին: Արյունոտ անապատներեն ճողոպրածներն ու որբանոցներուն մեջ հասակ նետողները Հայ ազգի հարուստ ավետիսը կը բերեին հուսալքված սրտերուն: Հին օրերու Հայ գյուղաշխարհի պատկերը կը միախառնվեր դաղթակայաններու մեջ համախմբված զանգվածներուն ողբերգական պատկերին, ու Համաստեղի ներաշխարհը կը փոթորկեր անօրինակ համերգով մը»:

«Սպիտակ Զիավորը» առաջին հերթին գրողի այդ ապրումների արտահայտությունն է, «Ո՛վ ենք մենք և ո՛ւր ենք գնում» ավանդական հարցերին պատասխանելու փորձ: Համաստեղի նամակագրությունը հաստատում է, որ նա վեպը գրելիս հաճախ է երկմտել, թե չի հաղթահարի «մեծ պաստառին վրա գույներու ու գծերու» պատկերման դժվարությունները, բայց գրչընկերները, քննադատներն ու շարքային ընթերցողները համոզեցին շարունակել սկսած դժվարին գործը:

Համաստեղը համոզված է, որ կատարյալ, ներդաշնակ աշխարհը արարող մարդու աշխատանքի և իդեալների միասնությունն է, իսկ նրա

¹ Այդ ուղևորության մասին են պատմում Կ.Ասատունին (Բագին, 1966, № 1), Սեզան (Երիտասարդ Հայուհի, 1966, № 1), Տեր Ս.Ա. քհ. Բաբախանյանը (Սփյուռքահայ արդի գրականություն վերջին կես դարու, Հ. Բ. (Սփյուռքահայ գրողներ, Միլիկըն, 1991)), Ս.Սիսեոյանը (Բագին, 1997), Համաստեղի նամակագրությունը, նրա արխիվում պահվող մի ձեռագիր:

Սփյուռքահայ արդի գրականություն վերջին կես դարու, Հ. Բ. էջ 548:

² Հեղափոխական Ալպում, Պեյրուֆ, 1967, № 3 - 4:

³ Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Համաստեղի ֆ., № 234:

ներառյալ հիմնականում գոյատևող իրականությունները շատ է հեռու այդ ամենից: Այս հակասությունից է ծագում մարդու, առաջին հերթին՝ Հայի օտարացումն իրականությունից: Համաստեղի գրականության համար տիպական կարոտի ու երազի թեման այս ենթատեքստում այլ երանգներ է ստանում գյուղաշխարհի՝ օտար քաղաքում հող ու հայրենիք երազող ներկայացուցիչներ, գյուղի պատմության ամենաարյունոտ էջերի հիշողություններ, Հայոց ազատամարտի, որպես մարդկության արարող հատվածի գոյության իրավունքը հաստատելու գոյապայքար՝ առաջին պլան մղելով ոչ թե հերոսների ազգային պատկանելությունը, այլ մարդկային նկարագիրն ու համամարդկային իդեալները:

«Սպիտակ Ձիավորը» մինչև վերջերս դիտարկվում էր որպես «առասպելի և հում իրականության տարօրինակ մեկ խառնուրդ», «ուր տարբեր սեռերը իրար կը գտնեն ու կը խանգարեն»⁷: Խորհրդահայ գրականագիտությունը վեպի թերությունների հիմքում տեսնում էր գրողի դավանանքը: Համաստեղը ՀՀԴ-ի անդամ էր, բայց ոչ մոլի կուսակցական. նա միշտ եղել ու մնացել է Հայի ու հայրենիքի երգիչ, Հայ մարդ, որի համար Հայաստանն ու Հայ ժողովուրդն էին միակ չափանիշը ողջ կյանքում: Ինչպես գրում է գրականագետ Գ. Սևանը, նա «ունեցել է պարկեշտություն, ինչո՞ւ է, նաև արիություն՝ ոչ մի նախադասությամբ էլ չարատավորելու հավատքն ու սերը հայրենի նոր իրականության նկատմամբ, ընդհակառակը, իր վերջին ստեղծագործությամբ՝ «Առաջին Ուերը», կանգնել է նրա կողքին՝ վիպակի հերոսի շուրթերով ասելով իր իսկ երազն ու տենչը...»:

Գրականագետ Ս. Դանիելյանը «Սպիտակ Ձիավորը» քննարկում է որպես ռոմանտիկ գրողի ռոմանտիկ երկ, քանի որ «...Հայ ժողովուրդը ռոմանթիկ է իր ապրումներով, իր հավատքով ու հերոսներով»: Արդեն այդ խոստովանությունը երևան է հանում պատմության սուբյեկտիվ ընկալումը. չէ՞ որ ինքն էլ նրա մի մասնիկն է»⁸: Կարծում ենք՝ ճշմարտությանն ավելի մոտ է Ն. Ադալյանը, որը Համաստեղի ռոմանտիզմն անվանում է ոչ թե գրական հոսանք, «այլ զգացողություն և Հայացք, որով գրողը հարաբերում է իրականությանը, մարդկանց ու ժամանակին»⁹: Հարցի լուծման շատ ինքնատիպ բանալի է տվել Համաստեղը «Շրջանը և Բաժնի» բանախոսության մեջ: «Բաժնի, որպես վիպագիր, կիրարկած է ռոմանթիզմի արտաքին ձևը», - գրում է նա ու մեկնաբանում, որ Բաժնի հերոսները տիպեր չեն, քանի որ «հոգեբանականը միշտ ալ տուժած է ձգտումնավոր վեպերուն մեջ, ինչքան ալ հանճարեղ լլլա գրողը»¹⁰: «Սամվելի» օրինակով նա բացատրում է, որ ընթերցողը «նման շատ հանդուգն» վեպերից կատարելություն չի սպասում հմայված «գեղարվեստական գեղեցկությունով»: Ինչ-ինչ, բայց նման «գեղեցկություններ» Համաստեղի վեպում շատ կան:

Համաստեղի գրական առաջին իսկ հաջողություններից պարզ էր, որ նա ռեալիստ է՝ ասելիքի ու ոճի ինքնատիպությամբ: Վեպը գրելու տարին-

⁷ Գ. Շահինյան, Համաստեղ, Պեյրուք, 1961, էջ 167:

⁸ Գ. Սևան, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր, հ. 2, Ե., 1997, էջ 146:

⁹ Նույն տեղում, էջ 196:

¹⁰ Ս. Դանիելյան, Սփյուռքահայ վեպը, գիրք Ա, Անթիլիաս, 1992, էջ 180:

¹¹ Ն. Ադալյան, Թոթովենց, Ե., 1994, էջ 283:

¹² Հայրենիք, Բոստոն, 1939, № 3:

րին նա նույն թախծոտ ու կարոտագին աչքերով էր նայում անցյալին՝ այնքան հարուստ հերոսական դրվագներով, լայն հայտնի՝ ողբերգական ավարտով: Ու քանի որ պատմության չգրված օրենքներով՝ մեր ժողովուրդը միշտ հաղթահարել է պարտությունները, Համաստեղը անցյալում տեսնում է նաև հերոսականը և շրջանցելով ժամանակ ու տարածություն՝ պատկերում Հայոց պետությունը: Կատարված ողբերգության մեջ նա գտնում ու ներկայացնում է այն ամենը, ինչ դեռ չունի ու հոգի է տալիս Հային՝ վառ պահելով հայրենիք ունենալու հույսը: Համաստեղը ներկայացնում է դարասկզբի պատմական դեպքերի հանգուցալուծման գեղարվեստական իր տարբերակը, որը հենվում է պատմական դեպքերի ու դեմքերի վրա: Համաստեղն էլ իր գրչորակներ Մալխասի նման կարող էր գրել, որ իր երկը «լայն գիծերով վերցուցած հեղափոխական վեպ է», ոչ թե «ընդունված իմաստով պատմություն», «այլ անցյալի տվյալներու վրա մշակված պատմական» վեպ¹¹: Համաստեղը ներկայացնում է մեր ժողովրդի պատմության «Փոթորկոտ շրջանի» գեղարվեստական նկարագիրը՝ հենվելով փաստական հարուստ տվյալների վրա, որոնց մեջ առաջնային նշանակություն ունեն նշանավոր Փիղայապետ Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ հեղափոխականի մը հիշատակները»: «Մեր պատմությունը հետապուտ աղետալի սխալների կրկնությունը չպետք է լինի, այլ սրբագրությունը»¹², - Գ.Ն.ժդեհի այս ձևակերպումով կարելի է բնորոշել Համաստեղի՝ վեպը գրելու նպատակը:

Երբ Համաստեղի դյուցազնավեպը փորձում ենք դիտարկել այս տեսանկյունից, պարզ է դառնում ճշմարտությունը գրողն աշխատում է մոռացությունից փրկել մեր ազատամարտի պատմության մի մեծ հատված՝ իր անձնագուհի ու տասնամյակների հեռվից պարզամիտ թվացող հերոսներով, որոնք, այո՛, պատկանելով որոշակի կուսակցության, աշխատում էին իրագործել Համահայկական մի ծրագիր՝ Հայի մեջ կենդանի պահել պայքարելու, հողը պաշտպանելու ունակությունը, որն աշխատասեր ու մարդանվեր մեր ժողովրդին հատուկ չէր ու հատուկ չէ այսօր, երբ կրկին կա հող ու ազատություն պաշտպանելու հարկադրանքը:

Համաստեղն աշխատում է պահել չափի զգացումը, լավ գիտե Հայոց ազատամարտի այդ հատվածի տխուր ավարտը, ներկայացնում է մարդկանց, որոնց կարելի է բնութագրել վեպի հերոսներից մեկի՝ Չերչի Կիրոսի խոսքերով. «Մարդ այն ատեն լրիվ կ'ըլլա և կատարյալ, երբ նպատակը կայուն ըլլա և ըլլա նույնպես կատարյալ և ճշմարիտ» (2, 547)¹³: Իսկ նպատակը Ռուբեն Տեր-Մինասյանը ներկայացնում է այսպես. «Միան մեկ նպատակ ունէր Հայությունը և այդ իր ազատագրումն է ստրկութենէ»¹⁴: Սա է կիրոսների ու նրանց հետևորդների գործունեության նպատակը: Սա եղել ու մնում է Հայի գոյության միակ պայմանը, և զարմանալի ոչինչ չկա, որ սերնդեսերունդ փոխանցվող այս սուրբ նպատակը պարբերաբար ունենում է նաև նվիրյալներ ու նահատակներ: Եվ ոչ միայն ՀՀԴ-ի շարքերում: Համաստեղը հեռվից հեռու տեսնում ու հասկանում էր այն խուլ անհամաձայնությունը, որ կար խորհրդային Հայաստանի սահմաններում

¹¹ Մալխաս, Զարթոնք, հ. Ա, Պեյրութ, 1987, էջ 14:

¹² Գ.Ն.ժդեհ, Բաց նամակներ Հայ մտավորականության, Պեյրութ, 1929, էջ 32:

¹³ Համաստեղ, Սպիտակ Ձիավոր, հ. 1, և հ. 2, Լոս Անճելես, 1952: Այս վեպից մեջբերումները նշվում են փակագծում. առաջին թիվը հատորն է, երկրորդը՝ էջը:

¹⁴ Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, Թեհրան, 1982, հ. 2, էջ 139:

ծվարած Հայության ազգային նպատակի ու պարտադրված գաղափարախոսության միջև: Փաստ է, որ Համապրոլետարական նպատակների լայն ծրագրերի քարոզի անվան տակ ջախջախվում էր ազգային Հոգեբանության ամեն մի դրսևորում, իսկ արյունոտ 1937-ը, նախորդող ու Հաջորդող դեպքերը չունեն. չեն կարող որևէ արդարացում ունենալ: Համաստեղի նամակներում երևում է այն տագնապը, որ նա ապրում էր իր գրչեղբայրների, Հատկապես՝ Ա.Բակունցի կյանքի Համար, նրանց օրինակով՝ նաև Հազարավոր այն Հայերի, որոնք փրկվել էին արյունոտ յաթաղանից ու Հայտնվել կարմիր տեռորի ճանկերում: Դրողն այս ամենին նայում ու այս ամենի ցավն ապրում էր որպես մարդ, Հայ, որի Համար ամեն մի Հայ «Հերոսական գրվազներու մատյան մըն» է, ինչպես կարդում ենք նրա ձեռագրերից մեկում:

«Սպիտակ Զիավորը» պատմական Հենքի վրա Հյուսված Հերոսապատում է կենդանության օրոք Հեքիաթ ու երգ դարձած այն նվիրյալների մասին, որոնց երակներով մեր Հեթանոս Հայրերի արյան կանչը Հասնում է Հայոց ազատամարտի մերօրյա նաՀատակներին: Հիմա, երբ Հարյուրամյա Հեռավորությունից Հետ ենք նայում, մեր աչքի առաջ Հառնում է Հերոսների այն բույլը, որի քաջությունն այսօր էլ օրինակելի է, իսկ Հայրենիքի Համար նաՀատակվածները ժողովրդի Հիշողության մեջ կուսակցական պատկանելությամբ չեն մնում, պարզապես անմահանում են կարճ մի անունով՝ Արաբո, Սերոբ, Գևորգ, Անդրանիկ... Եթե «ազգի մը խորությունը կազմողներն են անձնուրաց և ստեղծագործ անՀատները», որոնք իրենց մեջ խտացնում են «ցեղին բարձրագույն առաքինությունները»⁵, ինչպես գրում է Դ.Լազյանը, ուրեմն մեր ժողովրդի մեծությունը ոչ թե տարածությամբ, այլ խորությամբ ճանաչելու Համար անՀրաժեշտ է խոնարհվել Հայ ազատամարտի Հերոսների առջև՝ կենդանի պահելով նրանց ոգին:

Համաստեղի Համար ամենակարևորը Հայոց ազատամարտի պատմության իմացությունն է՝ անմոռանալի Հերոսներով և ազատության, ժողովուրդների Հավասարության, խաղաղության Համամարդկային իդեալներով: «Սպիտակ Զիավորը» վեպում նա կերտեց անմոռանալի Հերոսներ, իսկ Համազգային պայքարի և իրականության պատկերման Հետ կապված ինչ-ինչ թերությունների Հիմքում կարելի է և պետք է տեսնել նաև Շ.Շահնուրի Հերոսի՝ Սուրենի Հանրահայտ բացատրությունն այն մասին, որ Հայն ունի «խնկելի Հեղափոխականներ, բայց ո՛չ Հեղափոխություն»¹⁰: Դարասկզբի Հայոց ազատամարտի Հերոսները շատ քան ունեին ասելու, Շ.Շահնուրի բնորոշմամբ՝ անդունդ կոչվող Սիյուռքում Հայտնված Հային և ոչ միայն նրան: Համաստեղի վեպը, եթե անգամ ձախողված լինեք, էլի արժեքավոր կլինեք՝ որպես մեր ազգային անՀեռատես մտածողության և գործունեության (Շահնուրը կասեր՝ «անբուժելի կարճատեսություն») արմատների ու Հետևանքների քննության, մեկնաբանության փորձ: «Սպիտակ Զիավորը» ծրագրային վեպ է այն առումով, որ Հայի ու Հայության առջև մեկ անգամ ևս Հստակորեն դնում է գոյության միակ ճիշտ ծրագիրը՝ ազատության Համար մղվող պայքարում մեր թշնամին ու մեզ Հաղթողը մենք ենք՝ անմիաբանությամբ, թշնամուն դեռ չՀաղթած՝ մարդասիրության կոչերով:

⁵ Գ.Լազյան, Հեղափոխական դեմքեր (մտավորականներ և Հայդուկներ), Գահիրե, 1945, էջ 352:

¹⁰ Շ.Շահնուր, ՆաՀանջը առանց երդի, Ե., 1994, էջ 127:

1956-ի հոկտեմբերի 23-ին Համաստեղը նամակ է գրել ընթերցողներին՝ մեկին՝ դուրս. Քեքելեկյանին, որը դժգոհել է վեպը կարդալու դժվարություններից: Նա շեշտում է, որ իր գրականության առաջին քննադատն ինքն է, չատ լավ դիտե իր ստեղծագործության արժանիքներն ու թերությունները: Վեպում «ժողովուրդի մը զանգուածային շարժումը կա» լայն կտավի վրա (ինքը գրում է՝ «ընդարձակ առնված է պաստառը»), «տեղ-տեղ փակագծերը բացված են և այդ տեսակետն տուժած է վեպին թեքիքը»: Համաստեղն ընդունում է, որ կարելի էր «վերցնել երկար միջանկյալը և վեպը ավելի կը շահեր», բայց սիրային տեսարաններն ինքնանպատակ չեն, «միջոցներ են բան մը ըսելու եւ մանավանդ նկարագիր մը մեջտեղ բերելուն»: Ամենակարևորը՝ «կա մեր ժողովուրդը իր առավելություններով, իր թերություններով, իր լացով և ծիծաղով: Ունի ատեն չեմ քաշվիր ըսելու, որ վեպի նկարագիրները և կամ տիպերը ողջ են, ունին ջիղ և արյուն, ինչպես Ձերչի Կիրոսն է, Ուստա Մակարն է, Փեղայի Մարգարն է, Արջ Սաքոն է, դայեկ Նուրխանն է, բայց ինչու՞ կը շարեմ այդ անունները, երբ անոնք բան մը ըսած չեն Ձեզի: Գուցե իրավունք ունիք վեպը ձախող նկատելու: Իմա մոր մը գուրգուրանքն է իր զավակներուն, ըլլան անոնք ձախիք և կամ միականի: Նույնն են բոլոր Հեղինակները: Ոմանք վեպի մեջ ուզած են պատմական ճշգրտություններ տեսնել, առանց անդրադառնալու, որ «Սպիտակ Ձիավորը» պատմական վեպ չէ, այլ շրջանի մը ոգորումները, ինչքան որ ես ինքս ծանոթ եղած եմ և կամ, այդ աշխատանքը ինչպե՞ս է իմ կարողության սահմաններուն մեջ»¹⁷:

«Սպիտակ Ձիավորը» վեպը Հայ գյուղի պատմության մի Հատվածի կյանքի Համայնապատկերն է, աշխատանքի ու Հողի տիրեզրական բարոության օրենքներով ապրող Հայ մարդու և ուժի օրենքով գոյատևող աշխարհի Հակամարտության պատկերը: Վեպում Համաստեղը շարունակել է «ներքին մարդու» քննությունը ուշադրության կենտրոնում պահելով արարող մարդուն: Հեռու մնալով նեղմիտ ազգայնամոլությունից՝ գրողը ներկայացնում է Հեքիաթային փյունիկի պես կրակներից բազմիցս Հառնած Հայի ու Ազատ Հայաստանի իր պատկերացումը, որի Համար կոչվում ու նահատակվում են վեպի Հերոսները: Անխզելի է Հայի կապը Հողի, աշխատանքի Հետ, իսկ Հացի արարումը, որպես գոյության ամենաարդար ձև ու նպատակ, սկսվում է Հեռավոր գյուղաշխարհից, Հասնում քաղաքակիրթ աշխարհի Հսկա քաղաքի բակում ծվարած պարտիզակ: Գրողն ուզում է, որ մարդն ապրի միայն այդ ծիրի սահմաններում, բայց աշխարհն ունի իր օրենքները, ապրելու իր պարտադրանքը, երբ մարդ-Հող՝ պորտալարի պես կենսատու կապի մեջ մխրճվում է ուժն իր իրավունքով: Եվ քանի որ, որպես օրենք, ուժի ուղեկիցը չարն է ու չարիքը, Հողագործը զրկվում է ոչ միայն Հողից, այլև ընտրության Հնարավորությունից: Այս դեպքում փոխվում է նաև աշխարհի պատկերը, իսկ Համաստեղը մարդու և աշխարհի փոխհարաբերության քննության ժամանակ տարբերակում է ուժի, զենքի դիմելու Հարկադրանքի առաջ կանգնած գյուղաշխարհն՝ իր առասպել դարձած Հերոսներով և ուժի օրենքով ապրող մնացած աշխարհը: Նրա գրականության մեջ մարդ-աշխարհ ներդաշնակությունը Հենվում է Հողից,

¹⁷ ԳԱԹ, Համաստեղի ֆ., № 52:

աշխատանքից, արարումից ծնված իմաստության վրա, որը, դժբախտաբար, հաճախ է անտեսվում, քանի որ աշխարհում գործում են ուժի, իրավունքի օրենքները: Գրողին մարդ-աշխարհ փոխհարաբերության մեջ հետաքրքրում են մարդու իդեալը և այն աշխարհի պատկերը, որը կա, գոյություն ունի երազի օրենքներով ապրող նրա հերոսների համար: Ուրեմն՝ նաև ընթերցողի համար: 60-ական թվականներին Հայ գրականության մեջ շատ հետաքրքիր զարգացում ստացավ «Հայրենիքի որոնման» թեման, ու Համաստեղի աչքից չվրիպեցին Խ.Դաշտենցի, Հր.Քոչարի առաջին հաջողությունները՝ «Խողեզան»-ն ու «Կարոտ»-ը: Ավելի ուշ հրապարակ եկավ «Ռանչպարների կանչը» դյուցազնավեպը, որը «Սպիտակ Ձիավորը» վեպի թեմայի շարունակությունն է:

«Սպիտակ Ձիավորը», որպես քաղաքական-ծրագրային վեպ, «վրիպած» անվանող գրականագետները նույնպես գրողի ամենամեծ նվաճումը համարում են կենդանի, խոսուն կերպարների շարքը, հատկապես՝ ֆիդայիների կերպարները: Համաստեղը իրարից շատ տարբեր և Հայ ազատամարտիկի նկարագիրն ամբողջացնող կերպարները կերտում է խմանքով՝ մեկ-երկու մանրամասնով ներկայացնելով հերոսի «կենսագրական» կարևոր տվյալները: Մնացածը կատարվում է ընթերցողի աչքի առաջ, և եզրակացությունը մնում է նրան: Այս առումով «ամենագրկվածը» Մարտիկն է, որի մասին ավելի շատ լսում ենք, քան տեսնում վեպում: Եթե փորձենք վեպը դիտարկել որպես դյուցազնավեպի տարբերակ, իսկ գլխավոր հերոսին՝ որպես մեր ազգային ճակատագրից անբաժան ասպետական կռվի ու նրա հերոսների մարմնավորում, որն ապրում է մահից հետո էլ՝ իբրև ազգային հերոսական ոգու դրսևորում, գուցե կարելի է «ներել» գրողի այս վրիպումը: Մարտիկի կերպարում անձնական ապրումների խորությունը, ճակատագրական կորուստներն ու մարդկային նկարագիրը զուգադրվում են հերոսականի խտացման թանձրությունը և գրա ճնշման տակ քիչ-քիչ զոռնագրկվում: Սոսկ հերոսականի պատկերման նեղ չրջանակից դուրս գալու անհրաժեշտությամբ ու համաժողովրդական շարժում ծնող գաղափարական-քաղաքական մեծ տեղաշարժերով է պայմանավորված Մարտիկին «կռվի դաշտից» շուտ հեռացնելը:

Ամենակարևորը՝ Հայոց ազատամարտի պատմության ընթացքում քանի-քանի՝ անօրինակ քաջություններ աչքի ընկած հերոսներ էին նման տխուր ավարտով վերջացրել իրենց հերոսական կյանքը: Մարտիկը Արարոյից մինչև մեր օրերի ազատամարտի հանրահայտ ու պաշտելի, ինչպես նաև պատմության էջերում սոսկ անունով կամ անանուն մնացած քաջորդիների մարմնավորումն է՝ նույնքան վճռական իր գործողություններում և անմնացորդ նվիրվածությամբ անմահացած: Նման ամեն մի ծանր ու անփոխարինելի կորստից հետո պայքարի դրոշմ բարձրացրել է ազատության մեկ ուրիշ ուխտավոր, ու շարունակվել է հերոսամարտը ճիշտ այնպես, ինչպես Համաստեղի վեպում է շարունակվում Մարտիկի մահից հետո: Սա է կյանքի տրամաբանությունը, որին ենթարկվում է Համաստեղ գրողը:

Ազգային ողբանդանը, որի մասին վեպի առաջաբանում խոսում է Համաստեղը, գործողությունների ծավալման ընթացքում դառնում է դյուցազնավեպի նորոյա տարբերակ, որը հյուսվում է Մարտիկի ծննդից մինչև մահ, շարունակվում հերոսի անմահության պես: «Մարտիկ որպես խորհրդանիշ կ'անցնի վեպի մեջն» (1, 3), - գրում է Համաստեղը՝ նրան

ներկայացնելով առաջին հերթին որպես անցյալը, ներկան, ապագան շողկալող հեքիաթի, ազգային դուցազներգության հերոս՝ Դավթի ցեղից, տոհմից՝ «Հավլունի թուրը» ձեռքին: Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է, որ հայերը Արարոյի մահից հետո երկար ժամանակ չէին հավատում, որ նա մեռել է¹⁰: Եվ ոչ միայն Արաբոն... Մարտիկի կերպարը հայ ազատագրական պայքարի նշանավոր դեմքերի յուրատեսակ խտացումն է, յուրօրինակ խորհրդանիշ, որ ներկայացնում է այդ պայքարի և՛ ուժեղ, և՛ թույլ կողմերը: Հեքիաթով մեծացած, հեքիաթի հերոսների օրինակով կյանքում երջանկություն որոնող պատանին հայտնվում է մարդկային իրական փոխհարաբերությունների խաչմերուկներում, ու կամաց-կամաց ինքն է դառնում հեքիաթի հերոս: Նա կա, գործում է, պատժում չարին, օգնում խեղճին՝ անկախ ազգությունից ու դավանանքից, դառնում անկախության համար մղվող կռիվների դրոշակակիր ու դրոշ:

Փաստ է, որ Մարտիկը գրեթե չի երևում իրական պայմաններում, բայց ամենուր է ու միշտ ներկա՝ պատկերված գործողություններում: Անշուշտ, ճիշտ չի լինի Մարտիկի (և ոչ միայն նրա) կերպարի նախատիպերի¹¹ որոնումները կապել կոնկրետ պատմական անձների հետ: Այս պարագայում կարևոր է նաև ավանդականի դերը. Մուշեղ Մամիկոնյանից սկսած՝ մեր պատմության մեջ Մպիտակ ձիավորը եղել ու մնում է անձնուրաց քաջության, վրեժխնդրության հետ զուգորդվող ասպետության, մեծահոգության, ազնվության խորհրդանիշ: Եթե անցած հարյուրամյակները մարդուն ու մարդկությանը չեն ապացուցել այդ արժեքների հավերժությունը, ու XX դ. սկզբին (հավելենք՝ նաև վերջում) կրկին զենքի պիտի դիմել՝ նույն այդ արժեքները պաշտպանելու համար, ուրեմն՝ մարդու և մարդկության անցած ճանապարհը այդ գաղափարների Գողգոթան է: Իսկ մարդը, աշխարհը կրկին անհաղորդ են երկնքին՝ չնայած խոսում են ու խոսում խաղաղությունից, բարուց, ազնիվ աշխատանքից...

Մարտիկի գուլիսը կտրելը պետք է դիտարկել նաև Համաստեղի գրականության՝ աշխարհի ու մարդու մասին ենթատեքստով. աշխարհի չգրված օրենքներից է նաև չարի ու չարիքի մշտական ու կանխավ ապահովված հաղթանակը վեհի ու մարդկայինի նկատմամբ: Այդպիսին է նյութի ու նյութականի գերի մարդու սահմանած «կարգը», որին զոհ են գնում ոչ միայն անհատներ, այլև ժողովուրդներ: Այս դեպքում ժողովրդի թիվն ու մարտունակությունը չեն վճռորոշը, այլ դավանած սկզբունքները¹². Ինչ-որ մեկին սա կարող է թվալ առաջադիմության ընթացք, բայց Համաստեղի համար, որը պատմության հոսքն ու մարդուն քննում է

¹⁰ Ռուբեն, Նշվ. աշխ., հ. 3, Թեհրան, 1982, էջ 59:

¹¹ Վեպի հերոսների նախատիպերի որոնման հարցով զբաղվել են գրականագետներ Մ.Թեոդոսյանը և Ս.Դանիելյանը: Մարտիկի նկարագրի մեջ Մ.Թեոդոսյանը տեսնում է Գ.Ջավուչի, Սեբորի, Անդրանիկի տիպարները. Վարդանը Ռուբենն է, իսկ բժիշկ Նայիրյանը՝ Ն.Աղբալյանը (Դար մը գրականություն (1850 - 1950), հ. Բ, Գահիրե, 1955, էջ 115): Ս.Դանիելյանը Դժոխք Հրայրին է անվանում Ջերջի Կիրոսի նախատիպ (Սփյուռքահայ վեպը, գիրք Ա, Անթիլիաս, 1992, էջ 304):

¹² Այս առումով հետաքրքիր են Ա.Կամյուի մեկնաբանությունները. «Մենք ստիպված էինք ձեռք ընդօրինակել, որպեսզի չմեռնեինք», - գրում է նա՝ պաշտպանելով այն մարդու իրավունքները, որը չի ուզում սպանել, որպեսզի չավելացնի աշխարհի չարիքը. և ազգայնամուլ չէ, քանի որ չատ է սիրում իր հայրենիքը (Ա. Կամյու, Նամակներ գերմանացի բարեկամին (Ռուբիլոն, Ե., 2000, № 1, էջ 34 - 47)):

քրիստոնեական մարդասիրության ու համատիեզերական բարության ենթատեքստով, չարիքի արմատն ու չարի մարմնավորումը անկախ կոնկրետ ազգերից ու ժողովուրդներից, ուժն է և ուժի պաշտամունքը: Հայ մարդն ընդհանրապես, իսկ Համաստեղ գրողը մասնավորապես, չունի «դենետիկորեն հիմնավորված» ատելություն թուրքի նկատմամբ: Նա ատում է մարդասպան, ավերող, գազանից քայլ անգամ չհեռացած գազանաբարո մարդակերպ էակին: Եթե մի քիչ էլ խորանանք գրողի հայացքներում, կհասնենք զարմանալի, բայց հայի համար լրիվ հասկանալի ու տիպական կարեկցանքին, որ Համաստեղն զգում է արարելու աստվածային հնարավորությունից յաթաղանով, հեղված արյամբ ու ազգովին չմեղանչելու անգիղջ համառությամբ բաժանված, ուժի հոգեբանությամբ գոյատևող մեր հարևանների նկատմամբ, որոնք կտրեցին իրենց մարդկությանը և քաղաքակրթությանը կապող միակ թելը աշխարհասփյուռ դարձնելով հայությանը: Վերջիվերջո հազարամյակների ընթացքում հայի մշակած հողն ու կառուցած եկեղեցիները «ձեռք են բերել» իրենց տիրոջ ազգային նկարագիրն ու հոգեբանությունը. դիմադրում են ու դիմանում ամենաաներևակայելի պայմաններում մնալով հայի ստեղծած քաղաքակրթության վկաները: Հիշենք, որ Գ.Նժդեհն այսպես էր ձևակերպում հայոց ազատամարտի գլխավոր սկզբունքը. «Պատերազմի արյանք, որ համաշխարհային հաղթանակից: Արդար է հաղթանակը, երբ այն արդար է համարում պարտված թշնամիդ անգամ»²¹: Սա է Համաստեղի՝ զենք վերցրած հերոսների դավանանքը, որին անհաղորդ է աշխարհը:

Համաստեղի հերոսները հավատավոր մարդիկ են, որոնց կատարածի արժեքը, վարքագիծը տասնամյակներ անց քննարկման ենթակա չեն. պատմության բոլոր վայրկյաններին հակառակ՝ հայի ազգային մեծ երազանքն ու հոգևոր թագավորությունը կան, ապրում են ամեն մի հայի սրտում, իսկ մենք, բարեբախտաբար, հասել ենք այն ժամանակներին, երբ պետք է կարևորվեն ոչ թե մարդկանց բաժանող քաղաքական, կուսակցական անջրպետները, այլ նրանց համախմբող, միավորող ազգային սրբություններն ու արժեքները: Միանշանակ է մի բան՝ թանկ է ազատության, անկախության, հայի ու հայության գոյատևման ճանապարհին թափված արյան ամեն մի կաթիլը: Տասնամյակների հեռվից, անշուշտ, ավելի ու ավելի տեսանելի են դառնում քաղաքական, կուսակցական վրիպումներն ու սխալները, բայց և միաժամանակ ոչ պակաս խնկարկելի՝ գաղափարին նվիրվելու, գաղափարի համար ապրելու նվիրյալների ու նրանց հետևորդների գործը: Պատմության ամենամեծ դասը պատմության դասերից սովորելն է, իսկ մեր ժողովուրդն իրեն հատուկ մեծահոգի անփութությամբ հոգևոր շատ արժեքներ է «մոռացել» իր երկար ճանապարհի տարբեր կեռամաններում: Ավետարանի նշանավոր խոսքի օրինակով կարելի է պնդել եկել է ազգային հոգեբանության, նկարագրի, պատմության, ապագայի լրիվ պատկերն ունենալու ժամանակը, և դրա համար հարկավոր է հավաքել ամեն մի «մանրուք» ու այդ համահավաք արժեքների ուղով դաստիարակել հայի նոր սերունդներին՝ հայի ազատ Հայրենիքը կառուցողներին ու մարտիկներին (եթե հարկ լինի)՝ հակառակ աշխարհագրական, կուսակցական բաժանումների:

²¹ Գ. Նժդեհ, Բանտային գրառումներ, Ե., 1994, էջ 77:

Համաստեղի «խենթ» հերոսների կոիվն արդար է ու արդարացի, բայց մի բուռ խենթերով հնարավոր է լուծել միջազգային ամենատարբեր ատյաններում չարչրկված ու այդպես էլ լուծում չգտած պահանջատիրության խնդիրը: Հարց, որի մասին գրողը չէր կարող վեպում չխոսել: Դիշտ է, Վարդաձորի կոիվները հերոսական են, բայց հայ գյուղն ու գյուղացին ինչքան պիտի ապրեն լեռներում կտրված հողից ու աշխատանքից: Դեպքերի հետագա ընթացքը ցույց է տվել, որ ո՛չ երիտթուրքական տխրահռչակ շարժումը, ո՛չ ազատության ու հավասարության մասին կարգախոսները, ո՛չ մեծ տերությունների «օգնությունը» ոչինչ չեն տալու մեր ժողովրդին: Հ.Օշականը գրում էր, որ «թուրքը չի բավեր տեսնել: Պէտք է գայն զգալ»²², իսկ ինչ վերաբերում է թուրք «հեղափոխականներին», փաստն այն է, որ «թուրքերը երբեք չհավատացին հայկական վտանգի մը: Բայց ճարտարությամբ չահագործեցին ինչ որ շարժումը կրնար բերել իբր նպաստ, այդ բնաջնջումի վարդապետության»²³: Գաղտնիքն այն է, որ պանթուրքական «մեծ երազանքը»²⁴ հողն առանց օրինական տերերի, եղել ու մնում է թուրքի՝ անկախ դաստիարակությունից, ցեղային հատկանիշը:

Կրկին մեջտեղ է գալիս մեր ազգային ռոմանտիզմի խնդիրը: Համաստեղը վեպը գրելիս չէր կարող հաշվի չնստել այս հանգամանքի հետ: Վեպում հերոսական մարտեր, կռվի աննման տեսարաններ շատ կան, բայց կա գյուղ վերադառնալու, խաղաղ ապրելու մեծ երազանք: Այս երազանքի իրագործմանն են նպատակաուղղված բոլորի ջանքերը սկսած Մարտիկից, Կիրոսից, Փիղայիներից, ջրաղացպան Նավոյից մինչև ռանչպար Գաբոն, որը տեղահանության ժամանակ «իր հետ առած էր նաև սերմացու ցորեն» (1, 309): Սա է գլխավորը:

Վեպի վերջին պատկերն ակնհայտ նմանություն ունի Բաֆֆու Վարդանի հանրահայտ երազի հետ. Հայաստանի արևն արդեն «նոր իմաստ ունեն»²⁵ Ջերջի Կիրոսի համար, և կյանքի քառասուն տարիները պայքարի, կռվի ու թափառումների մեջ անցկացրած հերոսը քայլում է դեպի երկիր՝ գարնանային ծաղկուն խաղաղության համայնապատկերի մեջ: Գրողն իր «երկնքին պես իմաստուն ու արևին պես բարի» հերոսի հետ է կապում երկրի ու ժողովրդի վերածնունդը:

Հաղթանակը, որը նկարագրում է Համաստեղը, խորհրդանշում է ոչ միայն Առաջին հանրապետությունը: Համաստեղը քանդում է ժամանակի ու տարածության պատենները, փոխում պատմական դեպքերի ընթացքը, որ գտնի ու հաստատի մեր ազգային գոյության հիմքերը: Դրանցից ամենակարևորը կարմիր սահմաններով չրջափակված Հայաստանի գոյության փաստն էր: Վեպում ներկայացված է Առաջին հանրապետության խորհրդանշական պատկերը, բայց կուսակցական պատկանելությունն ու քաղաքական «անհաշտությունը» չէին կարող Համաստեղ մարդուն, գրողին, գեղագետին հարկադրել մոռանալ Հայության բնօրանն ու հույսը: Նա փաստորեն քննում է հայի ու Հայության ապագայի, գոյության իրավունքի խնդիրը՝ մի կողմ թողնելով «խորհրդային» ածականը: Տասնամյակներ անց գրողը դեպքերի զարգացման հետևանքի իմացության դիրքերից քննեց դարասկզբի հայ ազատամարտի մի հատվածը ու փորձեց հարազատ մնալ իրականությանը՝ դեպքերի ցանկալի ավարտի ռոմանտիկ երանգավորման

²² Թ. Օշական, Մնացորդաց, Հ.Գ. Անթիլիաս, 1988, էջ 20:

²³ Նույն տեղում, էջ 104:

մեջ պահելով չափի զգացումը: Մի բան, որ Հատուկ չէր Հայ իրականությանը ո՛չ դարասկզբին և ո՛չ էլ Հաջորդ տասնամյակներին. Համընդհանուր խանդավառության ու ոգեշունչ որոնումների շրջանում այլ էին նպատակն ու ծրագրերը: Համաստեղը ներկայացնում է այդ ծրագրերի իրագործման համար կյանքը զոհասեղանին դրած կուսակցական գործիչների, ֆիդայիների:

Քաղաքական մեծ անցուղարձերից հետո աշխարհի քարտեզի վրա կա, մնում է Հայաստան երկիրը, որը Համաստեղի համար եղավ ու մնաց Հայրենիք: Այդ են վկայում նրա նամակները: Վեպի գործողություններն ու հերոսները իրական են, պատմական, բայց «Սպիտակ Ձիավորը» պատմավեպ չէ դասական իմաստով: Գրողը քննում է մեր ազգային գոյության արմատները, Հոգեբանության առանձնահատկությունները՝ Համամարդկային արժեքների ենթատեքստով: «Սպիտակ Ձիավորը» վեպ-Համայնապատկեր է՝ պատմավեպի, սիրավեպի, Հոգեբանական, կենցաղային ու ծրագրային վեպի, դյուցազնավեպի տարրերով, որոնք ամբողջացնում են Հայի ազգային նկարագիրը: Տառապանքի մեջ իմաստնացած Հայ ժողովուրդը, գրում է Համաստեղը, «եթե հանկարծ գիտակցեր տառապանքի իրականության, ան վաղուց կը չքանար որպես ազգ» (1, 4): Հայ գրողը չի ուզում խոսել այդ տառապանքի մանրամասների մասին. ո՞ր Հայի արյան հիշողության մեջ չկա այդ տառապանքը, իսկ մարդկության քար սրտերը վաղուց են վարժվել Հայի արցունքներին: Նա ձգտում է Հավերժացնել մեր ազգային գոյության արմատներն ու Համազգային նպատակները:

РОМАН АМАСТЕХА “БЕЛЫЙ ВСАДНИК”

М.М. ХАЧАТРЯН

Р е з ю м е

В романе Амастеха (Амбарцум Келенян, 1895 — 1966гг.) “Белый Всадник” описана освободительная борьба армянского народа в начале XX века.

“Белый Всадник” не является историческим романом в общепринятом смысле слова, а представляет собой современный вариант народного эпоса. В центре внимания писателя находится тип человека — творца, который живет, руководствуясь законами труда, любви к родной земле и библейскими принципами доброты, терпимости. У Амастеха, как армянина и писателя, нет “генетической ненависти” к туркам: он ненавидит тип человека, независимо от его национальной принадлежности, который живет по законам грубой силы. Рассуждения Амастеха о самобытности национального бытия, о национальном характере нашего народа о нем актуальны и в наши дни.